

**ՀԱՅԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.**  
**( Տարբանական լինեա ) :**

Ժամանակ՝ անցնելով՝ խոտաճարակները իւրեանց կենցաղա-  
վարութեան դ հնդակ պայմանների մէջ ամփամ՝ չկարողացան  
տպրել թշնամու հալածանքներից աշխարհը աւերուեցաւ և  
խոտակեր կրօնաւորները ցրուելով աւերակ և անբնակ թո-  
ղին աեզերը մինչև Սիւնեաց իշխան Աշոտի օրերը։ Այս տես-  
նելով Սիւնեաց Յոհաննէս Եպիսկոպոսը գիր է գրում յիշեալ  
Աշոտ իշխանին և առ կարգադրում է որ Խոտակերաց վանքը  
վերստին չինեն և նորից ժողովին այնուեղ կրօնաւորներին։  
Աշոտը արգարեւ նորից կեանք է տալի վանքին, բայց որ գլխա-  
ւորն է՝ ժառանգեցնում է վանքին Արաստամանւխ գիւղը։

Արքայաշուք և բարեպաշտ Աշոտի մահից յետոյ եղաւ Վայոց ձորում՝ իններորդ դարու վերջում, սաստիկ գետնաշարժ, որից տապալուհցան այդ վաճքի եկեղեցիները և միւս բոլոր շինուածները։ Սիւնեաց Յոհաննէս եպիսկոպոսը այս հանգամանքի մասին նորից հազորդում է հանգուցեալ Աշոտի ամուսնոյն, տիկին Շուշանին։ Վերջինն առաւել աստուածասէր լինելով և իւր սիրելի ամուսնոյ յիշատակը չկորչելու համար ձեռք է զարկում և շինում է 910 թուականին տեղը և եկեղեցին առաւել տայժառ քան առաջ, այսինքն այն եկեղեցին, որ մօտ հազար տարի ապրելով, իւր թշուառ գէմքը այսօր ևս ցոյց է տայի իւրաքանչիւր ալցելուի...»

Օծման և բացման փառաւոր հանդիսին հրաւիրւում են Սլւ-  
նեաց Յոհաննէս եպիսկոպոսը և Հայոց՝ Դրասխանակերտցի  
Յովհաննէս կաթուղիկոսը։ այն որ գրեց Բագրատունեաց կար-  
ճատեւ թագաւորութեան պատմութիւնը։ Այդ կատարուեց  
Փրկչական 910 թուականին։ Զարմանալի երեսյթ . . . . այդ  
գառն և աղետալի միջոցին, երբ արարները քար ու քանդ  
էին անում Արարատեան հահանգը, երբ Բագրատունի նշանա-  
ւոր հարստութեան այդ միջոցի ներկայացուցիչը, մինչև անգամ  
վերոյիշեալ կաթուղիկոսը, արարական կատաղի հալածանքից

աստանդական և թափառական կեանք էին վարում, շատ անգամ հայրենիքից դուրս այդ գառնաշունչ միջոցին հայ իշխանները և հայ հոգեորականները ժամանակ էին գտնում եկեղեցիներ շինել, վանքեր վերանորոգել, հանդիսաւոր նաւակատիք կատարել, միաբանութիւն ժողովել....:

Իշխանուհի աիկին Նուշանը իւր որդիկերանց հետ միտոին, այդ հանդիսաւոր ժամին կազմում է այժմեան շինութեան հարաւային պատի երկարօրէն արձանագրութիւնը, որի պատճէնը արտօգրեցի վերը և որի մէջ տիկին Նուշանը կարճառօտ հաղորդում է մեզ վանքի պատմութիւնը: Սոյն արձանագրութիւնից իմանում ենք որ տիկինը Արաստամուխ գիւղը կրկին հաստատումէ ի ժառանգութիւն վանքի և կարգադրում է որ հինգ եկեղեցիներից մինում, որ սուրբ Աստուածածին է կոչվում, աարին երեք քառասունք կատարուին իւրեան և իւր ամուսնոյ, Աշոտի, Հոգւոյ փրկութեան համար, իսկ մնացեալ չորսի մէջ, որ մենք այժմ խորաններ ենք անուանում, պատարագ մատուցուին նորա որդւոց արեշատութեան համար: Եւ այս պայմանը հաստատում են իւրեանց վկայութեամբ 910 թուին Սիւնեաց Յոհաննէս եպիսկոպոսը և հայոց Յոհաննէս կաթուղիկոսը իւր եպիսկոպոսներով և կղերներով: Եւ նախկին Խոտակերաց վանքը, կարծեօք այդ ժամանակից, անուանւում է Քարկոփ:

Քարկոփը իւր ժամանակին եղել է Տղաղաղոսն, ինչպէս հաստատում է Օրբելեանն իւր պատմութեան կի գլխումը: Սոյն տիտղոսը նա յատկացնում է և Թանահատի և Արետեսի և այլ վանքերին, Մշտապաշտոն բառը Հայր Պուկտո Խնձինեանը<sup>\*)</sup> բացադրում է որ իբրև միաբանութեան մի դասը միւս դասից յետոյ փոխանակերով միշտ Կատարում էին Աստուծոյ պաշտօնը: և այդպիսի վանքերը Խնձինեանը դնում է անկանգնութելու վանքերի կարգում: Նորա հաստատութեամբ՝ այս կարգը սկիզբն առաջ հայոց մէջ սուրբ Սահակից, ինչպէս ցոյց

(\*) Խնձինեան. Հնախօսութիւն հ. գ. երես 207:

Է տաղի Խորենացու Խօսքը «քանզի ստացաւ աշակերտոս վաթ-սուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն Սպուդէից, արք կրօ-նաւորք, խարազնաղգեսուք, երկաթապատք, բոկագնացք, որ յար ընդ նմա շրջէին, որովք հցոնցէնասու պաշտմանը կատարէր զկանոնն \*):

Սուրբ Առհակի արարքը Խորենացին նմանեցնում է Սպու-դէից վանքերին, որ յունարէն նշանակում է ժրաջան, անխոնջ և սոյն անունով մատնացոյց է կամենում անել անհանդորչ վանքի վերայ, առում է Հայր Խնճիճեանը:

Եւ այսպէս, Տիկին Շուշանի արձանագրութիւնից իմացանք որ Քարկոփի այժմեան եկեղեցու անունը սուրբ Աստուածա-ծին է և շինուած է 910 թուականին: Բայց Արէլ արքեպիսկո-պոս Միհիթարեանցը, ինձ անցայտ հիման վերայ. Քարկոփի շի-նութեան տարին յատկացնում է 936 թուականին \*\*):

Քարկոփայ վանքը նորից ենթարկում է վերանորոգութեան իշխան Սմբատ Օրբելեանի ձեռքով, ինչպէս երեսում է նորա, թուականը կորած, միաշար արձանագրութիւնից արեելեան պատի վերին մասում, արտաքուստ: Սմբատ Օրբելեանը իւր իշխանութիւնը Վայոց ձորում սկսել է 1253 ին և ինքը մեռել է քսան տարուց յետոյ, այն է 1273 թուին, ուրեմն նա կարող էր նորոգել քարկոփայ վանքը 1254 ից մինչև 1272, մօտ 350 կամ 360 տարի տիկին Շուշանից յետոյ,

Սմբատ իշխանից յետոյ իշխում է նորա եղբայր Տարսայիծը: Սա իւր իշխանութեան ներքոյ գտնուած վանքերը, Տաթև, Նո-րավանք, Յաղացքար, Արտախս և այլ ամենայն, ուրեմն և Քար-կոփ հայրենական ժառնգութիւն է տուլիս իւր որդուն, մեր պատմագիր Ստեփաննոս Եպիսկոպոսին, որ թաթարաց Արղուն իշխանի ձեռքով, նոր սիդիլով, կրկին հառտատումէ իւր վերայ: Եւ 1297 թուին Ստեփաննոս Եպիսկոպոսը, Զուայ գիւղի և Արե-տեսի հետ, նու իրումէ նորավանքին և Քարկոփէ իրբե իւրեան

(\*) Խորենացի պատմ. Հայոց գիրք Գ. Գլ. Խթ.

(\*\*) Արարատ. Հոկտեմ. 1873:

հայութ հայրենաբաժիններ նախացնմաց գործ  
խումբ յիշած տայն վանքի շուրջը եղած ջրաղացի նաև սքարի  
արձանագրութիւնը, որի թուականը և եպիսկոպոսի անունը  
լիսվին համապատասխանում է մեր պատմաբանին և նորա ժա-  
մանակին:

Ահա այս տեղ արդէն վերջանում է մեզ համար Քարկոփի կեան-  
քը: Մոտ 600 տարուայ ընթացքում ինչ վիճակի է ենթարկուել  
այդ վանքը, ես բոլորովին չգիտեմ: Միայն գիտեմ որ Քարկոփի  
կամ քեալադաշի խղճուկ աւերակները կանգնած են այժմ  
Խաչիկու գիւղապատկան հողերի վերայ, Խաչիկեցիք վարում են  
նորա շրջակայքը, արածացնում են իւրեանց հօտը մինչև ան-  
գամ անասնոց ձմերանոց են շինել մօտը միքանի տարի առաջ  
վարդավառին ամբողջ հասարակութեամբ գալիս էին այդ տեղը  
զրօննում էին, կաթնապուռ էին վայելում մի փոքր և ո ուխտ  
անում: և ապա ցրւում իւրեանց տները: ևսկ հողը պատկա-  
նում է պետական գանձարանին:

Քարկոփի եկեղեցու քայքայումից երևում է որ շատ վաղուց  
է դադարել այդ տեղ բնակութիւն, ըստ որում չկայ ոչ մի ա-  
պացոյց նորա մօտիկ անցեալին: Չկայ շինութիւն, չկայ նոր  
տապանաքարեր, չկայ աւանդութիւն և այլն:

Մի կարեսոր հանգամանքի վերայ հրաւիրելով ընթերցողի ու-  
շադրութիւնը, ապա այնուհետեւ վերջ կտամ Քարկոփի մասին  
խօսելուս: Այդ այն է, որ Զալալեան Արքեպիսկոպոսի գիրքը  
եղբակացնում է թէ ոոյն վանքը կոչվում է երբեմն Անդրնէկ,  
երբեմն Քաջիովի և երբեմն Խաչեակերպ վանք (\*\*): Եթ արդէն ԱԶ  
գլխում, պատմական փաստերի վերայ յենուած, ևնթագրել  
եմ թէ ուր պէտք է լինի Ահերմնի վանքը: Դորանով հաստա-  
տուած է թէ Ահերմնի և Քարկոփի կամ Խաչեակերպ վանքե-  
րը չոկ են, որոնց ի զուր է իրար խառնում Զալալեանի գիրքը:  
Բայց հարցը վերջնականապէս լուծելու համար, և ճշմարտու-

(\*) Օրբել. Պատմ. Նահ. Սիս. գլ. ՀԱՅԱՍՏԱՆ. Կոռանով կը ամսագույշ (\*\*) (\*\*\*)

(\*\*) Զալալ. Ճանապ. Հ. Բ. Երես 170.

թիւնը վերականգնելու նպատակով ես կրկին գիմումեմ պատմութեանը:

Օրբելեանի պատմութեան ԽԴ և Մ գլուխներից տեղեկանում ենք որ Խոտակերոց կամ Քարկոփայ վանքը շինել է նախ իշխան Աշոտն և ապա, 359 հայոց թուականին, նորա ամուսին՝ արկին Շուշանը: Իսկ Ահերմոնի կամ Հերմոնի վանքը շինել է 385 թուին նոցա որդին, իշխան Սմբատը: Օրբելեանը ԽԴ. գլխում գրում է «վասն խոտակերաց վանիցն» որ կոչեցաւ Քարկոփայ և ամրող գլխում չէ յիշում Ահերմոնի անունը: Իսկ Մ. գլխումը Ահերմոնի վանքի տեղը որոշում է Եղեգնիս (այժմ Ալագեալ) գիւղակաղաքից վերև և տմբողջ գլխում չէ յիշում Խոտակերաց կոմ Քարկոփի վանքի անունը: Կհ, գլխի վերջում Վայոց ձորի վանքերը յիշելով առաջին տեղը գնում է Խոտակերաց կամ Քարկոփի վանքը, իսկ հինգերորդ տեղը գնում է Հերմոնի վանքը: Օրբելեանը նուիրում է Քարկոփի նորավանքին իրաւ ժամանակութիւն, բայց Ահերմոնի վանքի անունը չէ ալիս: Վերջապէս Քարկոփի եկեղեցու անունը «Սուրբ Աստուածածին» է, իսկ Ահերմոնի եկեղեցու անունը «Սուրբ Գրիգոր» է:

Այսքանս բաւական է ցոյց տալու համար թէ Օրբելինսկովոս Զալալեանը որքան հեռու է ճշմարտութիւնից: Իսկ պ. Բագրաձէն, որ ըստ երեւոյթին անհաշիւ հետեւել է Զալալեանի սխալմանց, նորանից մի քանի քայլ ևս այն կողմն է անցել: Նա հաստատում է թէ Հերմոնի վանքը հին Սիւնեաց գաւառի Եղեգնաձորումն է և թէ նա կազմում էր թեմ, ստորագրուած Կարմէր Հանիքի Սիւնեաց եպիսկոպոսարանին: Եւ թէ Կարմիր վանքը տասներորդ գարում կանգնեցրել է Սարգիս Ճօնը, և այժմ ևս կայ Ախուրեան գետի ձախ ափում, հռչակաւոր Ղօշա Հանիք Ճօն \*):

Կարմ իսօսքերով յարգելի հնագէտի ծուռը ճանապարհը ուղղվելու համար կարելի է ասել որ Հերմոնի վանքը Սիւնիքում կա-

(\*) Записки Моб, кавк., арх. стр. 52.

խում չէ ունեցել Կարմիր վանքից որ Նիրակումն է։ Կարմիր վանքը (Ղ.զլ վանք) Սարգիս ծօնի շինածը չէ, վերջինիս շինածը Առտղիկի խօսքով Դպրելանքն է, որ այժմ ևս կանգուն է Հառիճայ վանքից արևմուտք Նիրակում և վերջապէս ճռը Սարգիսը չէր, այլ Բարսեղն էր, որ եօթներորդ դարում՝ առաջնորդ էր Դպրելանքում։

Այսքանն բաւական համարելով Քարկոփի մասին, իս թողնում եմ նորան, ուղղուում եմ դէպի հիւսիս, բարձրանում եմ բլուրի գլուխը և ապա սորա լանջով իջնում եմ նորա միւս երեսը մի պարզ, յորդ և սառն աղբիւրի վերայ։ Այս աղբիւրը միւս իւր նմոնների հետ կազմում է մի առուակ, որ մի խոր ժայռապատ ձորի միջով հոսում է դէպի արևմուտ, դեպի ձաւաձոր գիւղը։ Աղբիւրի շուրջը, մանաւանդ աջ ափից տարածւում է տափարակ, կանաչազարդ հովիտ և դորա միջով այդ նեղ ճանապարհը տանում է դէպի Ամաղու։

Երբ իս կանգ առած նայում էի մի թաւալուած խաչքարի ճանապարհի վերայ, մօտեցան ինձ Խաչիկեցի հնձուորները։ Գիտես, այս քարի միւս երեսում գրած է թէ որ՞նք են Խաչիկ գիւղի սահմանները, նկատեցին հնձուորները։ Մօտ տար հոգի հազիւ կարողացան շրջել քարը իւրեանց գիւղի սահմանները որոշելու և իմ հետաքրքրութիւնս գոհացնելու համար։ Սակայն ինչ սպասում էինք այն գուրու չեկաւ, այլ գրած էր հետեւելը « Ի թվ. 21.» (730) Կամաւն Աստուծոյ ես Խաչիկ կրօնաւոր կանգնեցի զիսաչս ի բարեխօսութիւն ծնողաց իմոց յիշէք։ » Մը գուցէ Խաչիկ գիւղը այս կրօնաւորից է ստացել իւր անունը։

Իմ կանգնած լանջի մօտ երեւում են տների և եկեղեցու աւերակներ, կոտրտուած և մաշուած խաչքարեր և անարձանագիր տապանաքարեր, որոնք ապացոյց են թէ այդ տեղ եղել է երեւմն հայաբնակ գիւղատեղի. իսկ այժմ այդ տեղերը Խաչիկեցւոց վարելահողերն և արօտատեղերն են։ Աւերակները և շրջակայքը տեղական թուրքերի լեզուով կոչւում են Առնըա, իսկ հայերի մէջ Առնէա։ Սորանից ես եղբակացնում եմ որ այս Առնէաը Քարկո իայ վանքի արձանազրութեան և Օբքելեանի

պատմութեան մէջ յիշած Արտապահուի գիւղն է:

Օրբելեանը իւր ԽԴ գլխում որս շակի ասում է «... յըստորուն Վայոց ձորոյ, ի սահմանին Հրասէկայ քերդոյ մերձ յԱրաստամուխ գիւղ, որ իրը գիտանոց բարձր հայէր ի վերայ գաշտին Շարրոյ»: Արդարեւ այս տեղը գտնուում է Վայոց ձորի ստորոտում և պարզ նայում է Շարուր գաշտի արեւմտեան մասի վերայ: Ուրեմն ես վատահ եմ որ այժմեայն Առնէտը հին Արաստամուխ գիւղն է և այս հանգամանքի վերայ ես առանձնակի շեշտում եմ, ըստորում Քարկոփի օգնութեամբ որոշուեցաւ Արաստամուխ գիւղի տեղը և այս երկուսի օգնութեամբ կարելի կլինի որոշել Հրաշկաբերդի տեղը:

Առնէտից դէպի հիւսիս, երկրորդ բլուրի ոչ այնքան բարձր քարաժայու գագաթի վերայ երեւում են շրջապատ պարսպի հետքեր, որի մէջ երբեմն պատսպարուել է իւր թշնամուց մի ժողովուրդ: Խաչիկեցիք և միւս տեղական բնակիչները գորան անուանում են Սալսաղան ղալասի: այսինքն է Կաչաղակի բերդ: Թէ ինչու այդ մշտակարկաչ թռչունը յատկացրել է իւր անունն այդ բերդին, ոտ ոչոքին յայտնի չէ: Շարունակելով ճանապարհու դէպի հիւսիս ես անցայ միքանի լեռանագօտիներ, աջակողմեան սահմանում թուղնելով Երեւանաբնակ Ստեփան Եղիազարեանցին պատկանող Աբաս բնանադի լեռնավայրը, կանգ առայ այն բարձր լանջի վերայ, որ թեքուում է դէպի Առփայ գիւղը, Առփայ գիւղը:

Սորան համեմատ, լեռնային ճանապարհը այդ տեղ երկու է բաժանուում, մինը ձորով ուղղակի գնուում է դէպի Առփայ գիւղը, իսկ միւսը թեքուում է աջ կողմի վերայ դէպի Ամաղու: Վերջինով աստիճանաբար իջնում եմ մի գեղեցիկ ծառազարդ ձորակ, ուր բղխում է յորդառատ աղբիւր, որ կրում է « Սուրբ Յոհաննէսի աղբիւր » անունը: Ո՞վ է սուրբ Յոհաննէսը — տեղական աւանդութիւնը չէ որոշում:

Մի ժայռապատ և անտառազարդ ձոր աղբիւրից ձգուում է դէպի հիւսիս, աստիճանաբար ցածանալով և խորանալով մինչեւ Առփայ գիւղի գլուխը, որ հեռու է այդ տեղից 5—6 վերատաշափի: Սորան զուգահեռակից, աղբիւրի ձախ կողմից իջնում

է մի այլ ձոր, որի միջավ անցնում է Խաչկից Առփայ առանող լեռնային ճանապարհը և որը Առփայի գլխում միանում է առաջին ձորի հետ:

Այդ երկու ժայռապատ ձսբերի արանքում բարձրանում է ահա մի ևս առաւել բարձր ժայռը որի տափարակ գագաթը ձգում է հարաւից գետի հիւսիս: Գագաթն ունի Երկու հրապարակ, հարաւայինը — ցածր և հիւսիսայինը — փոքր ինչ բարձր: Գագաթն ի բնէ ժայռապատ լինելով, ամեն կողմից անմատչելի է: Խակայն արևմոեան կողմից քանդուած պարզապատի վրայից հազիւ յաջողւում է անցնել հարաւային ցածր հրապարակի վերայ, ուր կան հին տների պատեր: Փորձում էք բարձրանալ մւսայ հիւսիսային, բարձր հրապարակի վերայ, բայց դա անկարելի է: Եկած ճանապարհով կրկին, իջնում էք և անցնում էք արևելեան կողմը: Այդ տեղ սպակալի ժայռի տակով և ահասելի ձորի գլխով գնում էք գետի հիւսիս, ուր հանգ իսկում էք մի փորուածքի, ժայռի մէջ՝ որ առաջը պատառելով ընդունել է ինորանի ձև՝ փաքրիկ բեմով՝ պատարգ. մատուցմնելու, ուր կան նաև բազմաթիւ մանր խաչքարեր և նորանց բեկորներ:

Այս ճգնաւորի տուն է յայտնում ուղեկիցս, ոյսաեղ շատ վաղուց ճգնելիս է եղել մի սուբր բերդն էլ ասում է և ճգնաւորի բերդ՝ երգեմն էլ Առփի բերդ, Առփայ գիւղի մօտիկութիւնից:

Հաւանութիւն տալի սւեկցիս կարծիքին ասկայն յայտնում եմ ընթերցողին որ սորա պէս փաքրիկ ժայռահատ եկեղեցիներ մի քանի հաստ տեսակը եմ եռ Բաթենում: Մժնկերդի և Զիւհինի նշանաւոր հին բերդերի պարսպների շաւքը Երեսում է որ սոքա ամրացների պատկանելիք են, իբրև պաշարուածների ազօթատեղիներ:

Ճգնաւորի տնից կամաց կամաց բարձրանալով ես մանում եմ ժայռի մի նեղ ճեղքուած: այնքան նեղ որ երկաւ մարդ կողքի հազիւ կարսղանան անցնել, Այդ ճեղքուածով վերջապէս կարելի է գուրս գալ ժայռի տափարակ գլուխը, որտեղից շնչարտաւ ձորերի վերայ նայելիս սահսաւու է տիրում ճեղ:

Տափարակի վերայ կան սենեակների, հորերի, ջրամբարների աւերակներ, որոնց մէջ արդէն բռասել բարձրացել են ծառեր։ Հիւնիս արեւմտեան անկիւնում կայ քարի մէջ աղ ծեծելու փոստ Աւերտակներն այդպիսի բնական ամսութ տեղում, ուր, բացի յիշեալ կիրճը, չկայ այլեւս մի մատչելի կէտ, ցոյց են տալի որ այդ գագաթը հին ամրոց է։

— Բերդի բնակիչները ջուր վերցնելիս են եղել այն ձորի աւատակից, որ գալիս է Սուրբ Յոհաննէսի աղբիւրից, և ճգնաւորի տան սւզզութեամբ, բոլորովին ձորի խորքում կայ մի ստորերկրեայ ճանապարհի բերանա նկատեց ուզեկիցս։ Քար ու կիր բերանը այժմ փաքր ինչ քանդուած է։ շարունակեց նա, բայց մենք շատ անգամ տեսել ենք նորա քարէ աստիճանները, որոնք բարձրանում են գետնի ատակում դէպի բերդը։ Խոկ բերդի մէջ, այսուեղ, բերանը ծածկուած է, չենք գտնում, վերջացրեց իւր խօսքն ուզեկից։

Սրդարեւ, նշանաւոր բերդերը ունեն այդ առորերկրեայ ճանապարհ դէպի ստորոտի աւատակը, գետը, ալլիւրները և այլն։ Ով աեսել է Նարսի միջնաբերդը, Մժնկերդի բերդը, ոչ մի երկրայութիւն չի արտայայտի նա։ Դիարբեքիրու երգեմն անգլիական հիւպատոս Տէյլօր իւր ճանապարհութիւն Քիւրդստանում աշխատութեան մէջ նոյնուշեն մատնացոյց է անում թէ Հենրի Ենք քաղաքի մօտ կայ մի հին բերդ, որից 200 աստճանով ստորերկրեայ ճանապարհ է իջնում Տիգրիսի վերայ։ Ծոփաց գաւառի Անգեղ քաղաքի մօտ եղած հին բերդից նոյնուշեն իջնում է 177 աստիճանով ճանապարհ դէպի գետը և Խոկ արեւմտեան Տիգրիսի վերայ (Դիրէնէ առւ)։ Ամառէ կոչուած հին բերդից իջնում է դէպի այդ գետը միասնաբերկրեայ ճանապարհ քառասուն սաժէն (280 ֆուտ)։ Երկար ութեամբ և մի սաժէնից աւելի լայնութեամբ \* )։

Աերագառնալով նորից մեր կանգնած տեղը ես զարթեցնում եմ իմ կնճռոտ հարցերից մինը, այն է որոշել կորած այժմ

(\*) Տէյլօր. Ճանապարհական գրաւու. Եջ. 50, 53 և 55. առաջ. Հայո (\*)

անյայտ Հրաշկաբերդի տեղը։ Սոսորեւ բերած պատմական հիմունքների վերայ յԵնուած ես վստահանում եմ հաստատել ոք մեր որոնած Հրաշկաբերդը սոյն այս բերդն է, ուր կանգնած ենք մենք։ Մի կողմ թողնելով Շոպէնի և Զալալեանի կարծիքները, իբրեւ Հրաշկաբերդը — Ալագեազի բերդն է, ես կրերեմ Օրբելեանից այն կտորները, որոնք կվերաբերին մեր հարցին։

Օրբելեանի այն խօսքերը, թէ « յառաջ քան զայս ի բազում ժամանակաց բնակեալ էին խոռաճարակ և խարազնազգեաստ մարդիկ յարաբուն Վայոց Հորսոյ, ի աանձանէն Հրասեկայ բերդոյ, մերձ յԱրաստամուխ գիւղ եայլն, ցոյց են տալի, որ Հրասեկայ բերդը, Արաստամուխ գիւղի և Քարկոփի վանքի հետ, դրած է Վայոց ձորի ստորոտում և միմեսնցից մօտիկ։ Մի այլ տեղ նոյն Օրբելեանը շարունակումէ « որ բնակէր (Յոհաննէս եպիսկոպոս), ի Խորայոց անառագին որ Նորագանա կոչի, Ձը Հրաշկաբերդոյն » : « Կամեցաւ բնակել ի խորածոր անապատին Նորագանէց, Ձը անառէն Եղեշէկէն Հրասեկայ բերդոյն, առ հիազօր և մեծապանչ եկեղեցոյն սրբոյ կարապետին » \* )։

Եւ այսպէս վերոյիշեալ խօսքերից անշուշտ ոլէտք է եզրակցնել որ Քարկոփիը, Արաստամուխ գիւղը, Նորավանքի սուրբ Կարտպետի եկեղեցին (Ամաղուի Նորավանքը) և վերջապէս Հրաշկաբերդը միասին։ Իրար մօտիկ են և սահմանակից։ Սոյն այս գլխում պարզ որոշաւած է Քարկոփի տեղը, նորանով որոշաւած է և Արաստամուխ գիւղի տեղը։ Ամաղուի Նորավանքի տեղը լիովին յայտնի է։ Ուրեմն սորանց սահմանակից է և Հրասեկայ բերդը։ Ով յիշեալ սահմաններում ճանապարհորդել է և առանձին ուշադրութեամբ հետազոտել է աշխարհագրական դիրքը, նա չէ կարող կանգ չառնել յիշեալ ճգնաւորի բերդի վերայ, իբրեւ իսկական Հրաշկաբերդի վերայ։ Այդ սահմաններում չէ երեւում ի բնէ ամուր, մի նշանաւոր բերդ, բացի ճգնաւորի բերդը, որ ունենար Օրբելեանի նկարագրած Հրաշկաբերդի յառկութիւնները։

(\*) Օրբել. Պատ. Նահ. Միս. ԴԼ. ԽԴ. ԿԱ. և ԿԴ.

Եւ այսպէս, ընդունելով որ Հրաշկաբերդի տեղն՝ արդէն սրոշուած է, ես անցնում եմ նորա պատմութեանը։ Հրաշկաբերդի ամ Հրասեկայ բէրդ է կոչվում՝ այն պատճառով, որ նորան շինել է Հրասեկը «անհնարին ամրութեամբ աստուածատեղծ պարսպօք ամրացեալ այնպէս որ Օբելեանը գնում է նորան Ախւնեաց աշխարհի նախադաս բերդերի կարգում։»

Բազաց մեծափառ իշխան Հասանի որդի Յոհաննէս եպիսկոպոսը իւր աշխահի աւերուելուց յետոյ եկաւ և քնակեց Ամազու սուքք Կարապետի վանքում 1105 փրկչական թուականին և այդ միջոցին Հրասեկայ պարսիկ բերդապահը սաստիկ նեղում էր և աշխատում էր որսալ և սպանել եպիսկոպոսին։ Իւր գրութիւնից սոհիպուած եպիսկոպոսը պարսկական հագուստը հագնելով փախստեայ գնում է Ասպահան քաղաք Սուլթանի մօտ, որի միամօր որդին անհնարին ցաւով մերձիման հիվանդացել էր և առողջացաւ եպիսկոպոսի միջնորդութեամբ Աստուածային հրամանով։

Երախտապարտ Սուլթանը յարդելով եպիսկոպոսի խնդիրը՝ անսուտ և անանցական հրամանով իսկոյն ժառանգեցնում է Հրաշկաբերդը նորավանքի եկեղեցուն։ Այդ արքունական հրամանը նոյն իսկ Օբելեան եպիսկոպոսն անձամբ կարգացել և սուուգել է, «ըստ տաճիկ օրինին էր անհուն երդմամբք հաստատեալ զգիրն, նալլաթք և ապիզարք բազում կարգեալ ի նմա։ Եպիսկոպոսը մեծ ինդութեամբ գալիս է և բերդի ամիրային իւր ընտանիքով քարավիժ առնելով սատակեցնում է։»

Ապա բերդը յետոյ կրկին շինուում է և քնակւում են նորա մէջ պարսիկներ, իսկ Աթարէգ Խվանէի օրով, նոյն իսկ Խվանէի հրամանով և ուժով կրկին առնում են բերդը Առփայեցի Ախթամարն և Խաչենցի Վասակ իշխանը։ Նոյն աթարէգ Խվանէն, 1184—5 թուին, վրաց թուգաւորի հրամանով, անանցական գըրով լրնծայում է Հրաշկաբերդը իւր գաւառով հանդերձ Լիպարիս Օբելեանին։

Թաթարաց իշխան Ասլան նոյինն, 1236 թուականին, երբ նուածեց Վայոյ ձորը, այդ ժամանակ Ելիկում Լիպարիտեան Օբելեանը իւրայիններով ամրացաւ անառիկ Հրաշկաբերդի

մէջ։ Առանք շրջապատէց բերդը, իմացաւ թէ անհնարին է նուաճել նորան, սէր և պայման կապեց Եղիկումի հետ՝ որ գուրք գայ բերդից և կարգուի կողմնակալ վայաց ձորի սահմանում\*):

Լիգարիտ սոտնալով Հրաշկաբերդը Աթաբէգ Խվանէից յիշում է նորան իւր արձանագրութեան մէջ նորավանքի եկեղեցու հիմասային պատի վերայ, ներքուստ։ Սորանից ցածր, նոյն խկ պատի վերայ Ստեփաննոս Օրբելեանը իւր արձանագրութեան մէջ 745 (1296) թուիյ՝ Հրաշկաբերդն արդէն անուանում է իւր հայրենաբեժին և նուիրսւմ է նորան նոյն վանքին։ Առքա են աչա իմ ունեցած տեղեկաւթիւնները Հրաշկաբերդի վերաբերութետմբ։ Այժմ կրկին բարձրանանք սուրբ Յոհաննէսի աղքեւը և այն տեղից մի քանի տասնեակ քայլ դէպի արեւելք անցնելով մէնք արդէն կանզնած կլինինք Ամաղու գիւղի գլխին։

Ամաղուն գրած է փոքրիկ գեասակի ձախ ափսւմ՝ հարթ բաձրադիր դաշտի վերայ։ Նա թրքաբնակ է և իւր բոլոր սահմանով և հաչակաւոր վանքով պատկանում է Երևանցի Ստեփաննոս Եղիազարեանցին։ Այս գիւղը շատ անգամ յիշւում է Օրբելեանի պատմութեան մէջ, ինչելով գիւղի մէջ մենք աեւնում ենք հասարակ քարից շինան աւելի բարակ եկեղեցի, գլուխ կիսով շափ վայտանածք։ Նա շինուած է մի քանի տարի առաջ, երբ այդ տեղ թուրքերի հետ խառն բնակում էին Վանցի և Ալաշկերտցի գալթական հայեր, որոնք 1856 մինչև 1860 բոլորովին ցրուել են Դարալագեազի Ենգիջայ և Այսր հայաբնակ գիւղերի վերայ։

Ամաղու գիւղի առաջ տարածուում է բաւականին բնդարձակ դաշտ և ջրարգիւ ուր Ամաղուեցիք ցանօւմ են ցորեն, գարի և կորեկ։ Աակայն որքան յարմար գետին է հաղովի այգիներ տնկելու ինչ կասկած, որ հայերի բնակութեան ժամանուկ այդ դաշտը և ձորը ծածկուած էին այդիներով։ Որոնց գորիստ բէն մենք այժմ տեսնում ենք ծիրանի ծառեր։ Այս պատմութեանը այս պատմութեանը մէջ մէջ մայում մատչէ բայանան այս (\*). Օրբել Պատուան Արքունիք Գայկա, և Կայ Զամշ Պատուան Հայրց և աերես 212.

Գիւղից երկու երեք վերստ հեռու, խոր ձորի մէջ կանգնած են երբեմն հռչակաւոր նորաշանչի աւերակները, որ այժմ կոչվում է Ամաղուի վանք։ Ճանապարհը դէպի նա Ամաղու ից իշնում է ձորի մէջ և նորա լանջով, ելեւէջներով, քարերի և փոսերի միջով այցելուն մեծ զգուշութեամբ աստիճանաբար պէտք է յառաջնայ, Անզգուշութիւնը կարսղ է գլորել նորան ձորի մէջ։ Այս հնայի մզնա բայց մասսաւոր վայրէն է առաջանալ.

Սի հոչակաւոր ուխտատեղին, մի նշանաւոր մնասքան, իւր  
ժամանակին մի հարուստ որբավայր, վերջապէս Օրբելեանց  
քաջազդօր ցեղի դամբարանը, որպիսին յիշեալ նորավանդն է,  
իւր ծաղկեալ ժամանակ կռւնենար և յարմոր ճանապարհ:  
Բայց նորա հետքը այժմ չէ երեւում: Այժմ մի փոքրիկ կածան  
է որ մեզ կհասցնի վանքի գուռը, Աւրեմն գնանք այդ նշանա-  
ւոր տեղը, հետազօտենք աւերակները, քարերի տակից, գերեզ-  
մանների միջից, արձանագրութեանց շարքերից և պատմու-  
թեան էջերից ծանօթանանք նորա փառաւոր անցեալի հետ:  
Տեսնենք այդ ամայի ձորի մէջ ինչպիսի ախոյեաններ և պատկա-  
ռելի ժողովներ են եղել Հոյաստանեայց եկեղեցւոյ ինքնուրոյ-  
նութիւնը այշտպանելու: